ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀԿԳՆՄԱՊՁԲ-19/22

ք. Երևան «30» 05 2019թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Ն. Հարությունյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Էդիթ Պրինտ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա. Գալստյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Կատարողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Կատարողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Կատարողից պահանջել հատուցելու վնասները, եթե Պատվիրատուն Կատարողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Կատարողը էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Կատարողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Կատարողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Կատարողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Կատարողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Կատարողը իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Պատվիրատուի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Պատվիրատուն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Պատվիրատուի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պատվիրատուին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Պատվիրատուին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Պատվիրատուին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Պատվիրատուի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Պատվիրատուի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Կատարողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Պատվիրատուին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Պատվիրատուին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 66382380 (վաթսունվեց միլիոն երեք հարյուր ութսուներկու հազար երեք հարյուր ութսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Կատարողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

3.2 Պատվիրատուն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Կատարողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Կատարողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Էդիթ Պրինտ>> ՍՊԸ
Քաղ. Երևան, Կառավարական տուն 2	ք. Երևան, Թումանյան 12/3
ՀՀ ՖՆ աշխատակազմի	<<Արմսվիսբանկ>>
գործառնական վարչություն	Հ/Հ 25000118400210
Հ/Հ 900011005130	ՀՎՀՀ 00009253
ՀՎՀՀ 02512868	Տնօրեն՝
Գլխավոր քարտուղար՝	
_____ Ն. Հարությունյան	_____ Ա. Գալստյան
/ստորագրություն/ Կ.Տ	(ստորագրություն) Կ.Տ.

Հավելված N 1
«30» 05 2019թ. կնքված
ՀՀԿԳՆՄԱՊՁԲ-19/22 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափաբաժին	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի							
		Անվանումը, ապրանքային նշանը	Արտադրողը, ծագման երկիրը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Քանակը	Միավորի գինը, ՀՀ դրամ	Ընդամենը գինը, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը
1.	22111110-2	Դասագիրք «Այբբենարան»	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ հրատարակչություն, ՀՀ	«Այբբենարան»՝ 1-ին դասարանի դասագիրք, հեղ.Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան <u>Բովանդակային չափանիշներ</u> Դասագիրքը կազմված է ծրագրային և չափորոշչային պահանջների հաշվառմամբ և նախատեսված է վեց տարեկան երեխաների գրաճանաչության ուսուցման համար: Գրաճանաչությունն ընդգրկում է բուն գրուսուցման կամ տառուսուցման, կարդալու և գրելու կարողությունների ձևավորման, բառապաշարի հարստացմանև խոսքի զարգացման, ճանաչողական գիտելիքների հարստացման, լեզվական նախագիտելիքների ուսուցման, վերլուծական և համադրական կարողությունների ձևավորման և այլ նպատակներ ու խնդիրներ, որոնց իրականացմանն էլ ծառայում է դասագիրքն իր տարբեր բաժիններով: Այբբենարանն ունի ինչպես ճանաչողական, այնպես էլ դաստիարակչական արժեք. ընդգրկվող թեմատիկաներն են՝ ընտանիք, դպրոց, հայրենիք, կենդանական և բուսական աշխարհ, մանկական աշխարհ, դաստիարակում է ծնողասիրություն, հարգանք մեծերի նկատմամբ, ուսուցչի նկատմամբ, հոգատարություն փոքրի ու անպաշտպանի նկատմամբ, ընկերասիրություն, մարդասիրություն, բարություն: Իրականացվում է ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսուցում: Լեզվական նախագիտելիքների ուսուցում՝ հետևյալ ընդգրկումով՝ պատմություն, նախադասություն, բառ, վանկ, հնչյուն, ձայնավոր, բաղաձայն, տառ, մեծատառ, փոքրատառ, երկհնչյուն և եռահնչյուն տառեր, գաղտնավանկ, գրության երկու ձև ունեցող հնչյուններ, վանկատում, տողադարձ:	հատ	12304	1500	18456000	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 20x26 Թուղթը՝ օֆսեթ 80գ. Էջաքանակը՝ 128 Կազմը՝ ֆուտբորտ 270 գ. լամինացված					
2.	22111110-4	Դասագիրք «Մայրենի 1»	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ հրատարակչություն, ՀՀ	«Մայրենի 1»՝ 1-ին դասարանի դասագիրք, հեղ.Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան/ Բովանդակային չափանիշներ Դասագիրքը նախատեսված է ՀՀ հանրակրթական դպրոցի առաջին դասարանի համար: Շարունակությունն է «Այբբենարան» դասագրքի: Համապատասխանում է ՀՀ ԿԳՆ ծրագրային և չափորոշչային պահանջներին: Կազմված է համակցված դասագրքի սկզբունքներով՝ ըստ որի ընթերցանության և լեզվական տարրական գիտելիքների ուսուցումն ու կարողությունների ձևավորմանն ուղղված առաջադրանքները մեկտեղված են: Բովանդակային առումով դասագրքը շարունակում է «Այբբենարանի» ճանաչողական ու դաստիարակչական թեմատիկ ու գաղափարական ուղղվածությունը՝ դպրոց, դպրոցական կյանք, ընկերասիրություն, ընտանիք, ընտանեկան փոխհարաբերություններ, տոներ և դրանց դրսևորումն ընտանիքում, հայրենիք, հերոսներ, բնություն, տարվա եղանակներ, հեքիաթների աշխարհ: Շարունակվում է ծանոթացումը ժողովրդական մանրապատում ստեղծագործություններին:Լեզվական արդեն ծանոթ նախագիտելիքների ամրակայում և ընդլայնում, նոր գիտելիքների հաղորդում. պատմություն, նախադասություն, բառ, վանկ, հնչյուն, ձայնավոր, բաղաձայն, տառ, մեծատառ, փոքրատառ, երկհնչյուն և եռահնչյուն տառեր, գաղտնավանկ, գրության երկու ձև ունեցող հնչյուններ, վանկատում, տողադարձ, մեծատառի գրություն, իմաստով մոտ և հակառակ իմաստ ունեցող բառեր, ընդհանուր և մասնավոր իմաստ ունեցող բառեր:Նպատակաուղղված է կարդալու և գրելու կարողությունների զարգացմանը, բառապաշարի հարստացմանը, պատմելու կարողությունների զարգացմանը և այլն, արժեքային համակարգի ձևավորմանը: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 20x26 Թուղթը՝ օֆսեթ 80գ. Էջաքանակը՝ 64 Կազմը՝ ֆուտբորտ 270 գ. լամինացված	հատ	5147	1430	7360210	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը
3.	22111110-12	Դասագիրք «Մայրենի 2»	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ հրատարակչություն,	«Մայրենի 2», 1-ին մաս՝ 2-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝Ա.Քյուրքչյան,Լ.Տեր-Գրիգորյան Բովանդակային չափանիշներ	հատ	7169	850	6093650	Մինչև ս/թ օգոստոսի

		1-ին մաս	ՀՀ	Դասագիրքը նախատեսված է ՀՀ հանրակրթական դպրոցների երկրորդ դասարանի համար: Կազմված է համակցված դասագրքի սկզբունքով: Դասագրքի առաջին մասն ունի թեմատիկ հետևյալ բովանդակությունը՝ «Դու մեր դպրո՛ց սիրելի», «Մեր տունը», «Ոսկի աշուն», «Մանուկների աշխարհում», որը ոչ միայն նպաստում է բազմաբնույթ ու բազմակողմանի ճանաչողական գիտելիքների ձեռքբերմանն ու հարստացմանը, այլև համապատասխան արժեքային համակարգի ձևավորմանը: Շարունակվում է ծանոթացումը ժողովրդական մանրապատում ստեղծագործություններին: Լեզվական տարրական գիտելիքների ուսուցումն իրականացվում է համապատասխան մեթոդական կառույցի միջոցով՝ փոքրիկ նյութերի և վարժությունների համակարգով՝ առաջին դասարանի նյութի ամրակայման, ծավալման ու խորացման սկզբունքով. նախադասություն, նախադասության ուղղագրություն, բառ, բառակապակցություն, հնչյուն և տառ, գլխատառ և փոքրատառ, ձեռագիր և տպագիր տառեր, ձայնավոր և բաղաձայն, վանկ, վանկատում, տողադարձ, ձայնավորների և բաղաձայնների ուղղագրություն, գրությամբ և արտասանությամբ տարբերվող բաղաձայնների ուղղագրություն, տողադարձ, մոտ և հակառակ իմաստներ ունեցող բառեր, ընդհանուր և մասնավոր իմաստներ ունեցող բառեր: Դասագիրքը նպաստում է կարդալու գրելու, պատմելու կարողությունների զարգացմանն ու կատարելագործմանը, բառապաշարի հարստացմանը, խոսք կառուցելու կարողությունների զարգացմանը, գիտելիքը խոսքում կիրառելու կարողությունների ձևավորմանը, արժեքային համակարգի ձևավորմանը: <u>Տեխնիկական չափանիշները</u> Չափսը՝ 16,5 x 24 Թուղթը՝ օֆսեթ 70գ. Էջաքանակը՝ 88 Կազմը՝ ֆուտբորտ 270 գ. լամինացված					20-ը
4.	22111110-14	Դասագիրք «Մայրենի 2» 2-րդ մաս	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ հրատարակչություն, ՀՀ	«Մայրենի 2», 2-րդ մաս՝ 2-րդ դասարանի դասագիրք, հեղ.Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան <u>Բովանդակային չափանիշներ</u> Դասագիրքը նախատեսված է ՀՀ հանրակրթական դպրոցների երկրորդ դասարանի համար: Կազմված է համակցված դասագրքի սկզբունքով: Դասագրքի երկրորդ մասն ունի թեմատիկ հետևյալ բովանդակությունը՝ «Ձյուների թագավորության մեջ», «Լավ ու բարի գործեր», «Իմ անուշի՛կ Հայաստան», «Գարո՛ւն է, սիրո՛ւն է», որը ոչ միայն նպաստում է	հատ	7169	850	6093650	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				բազմաբնույթ ու բազմակողմանի գիտելիքների ձեռքբերմանն ու հարստացմանը, այլև համապատասխան արժեքային համակարգի ձևավորմանը: Շարունակվում է ծանոթացումը ժողովրդական մանրապատում ստեղծագործություններին: Լեզվական տարրական գիտելիքների ուսուցումն իրականացվում է համապատասխան մեթոդական կառույցի միջոցով՝ փոքրիկ նյութերի և վարժությունների համակարգով՝ առաջին դասարանի նյութի ամրակայման, ծավալման ու խորացման սկզբունքով, ինչպես նաև ներառում է լեզվական նոր հասկացությունների ուսուցում.բառ, բառակազմություն /արմատ, ածանց, պարզ, ածանցավոր, բարդ բառեր, բաղադրյալ բառերի ուղղագրություն/, առարկա, հատկանիշ, գործողություն ցույց տվող բառեր, հասարակ և հատուկ անուններ, հատուկ անունների ուղղագրություն, եզակի և հոգնակի թիվ, նախադասություն, պարզ համառոտ և պարզ ընդարձակ նախադասություններ, անցած գիտելիքների ամրակայում և խորացում: Դասագիրքը նպաստում է կարդալու, գրելու, պատմելու կարողությունների զարգացմանն ու կատարելագործմանը, բառապաշարի հարստացմանը, խոսք կառուցելու կարողությունների զարգացմանը, գիտելիքը խոսքում կիրառելու կարողությունների ձևավորմանը, արժեքային համակարգի ձևավորմանն ու դաստիարակությանը: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 16,5 x 24 Թուղթը՝ օֆսեթ 70գ. Էջաքանակը՝ 88 Կազմը՝ ֆուտբորտ 270 գ. լամինացված					
5.	22111110-35	Դասագիրք «Մայրենի 4» 1-ին մաս	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ հրատարակչություն, ՀՀ	«Մայրենի 4», 1-ին մաս՝ 4-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան Բովանդակային չափանիշներ Դասագրքում զետեղված են բազմաբնույթ տեքստեր՝ հայ և օտարազգի դասական ու ժամանակակից հեղինակների չափածո և արձակ ստեղծագործություններ (կամ հատվածներ), բանահյուսության նմուշներ և գիտահանրամատչելի փոքրածավալ նյութեր: Սա հնարավորություն է տալիս ուսուցման ընթացքում աղերսներ ստեղծելու գրական նյութի և կյանքի միջև, ընդլայնելու սովորողների աշխարհաճանաչողությունը, նրանց ծանոթացնելու լեզվի տարբեր ոճերի: Դասագրքում զետեղված նյութերը տարաբնույթ աշխատանքի հնարավորություն են ընձեռում: Մի կողմից դրանք նպաստում են այնպիսի հմտությունների	հատ	8749	780	6824220	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				ձևավորմանը, ինչպիսիք են վերլուծելը, փաստերը համադրելը, կշռադատելը, սեփական մտքերն ու կարծիքը հայտնելը, մյուս կողմից՝ լեզվական իրողությունների շուրջ կառուցված վարժություններն ու առաջադրանքները միտված են ոչ թե սոսկ գիտելիքի ձեռքբերմանը, այլ առավելաբար ստացած գիտելիքը կիրառելու հմտությունների ձևավորմանը: Ուսումնական նյութը դասագրքերում ներկայացված է տրամաբանական որոշակի հերթականությամբ: Դասագրքի առաջին մասը բաղկացած է թեմատիկ երկու բաժիններից: Առաջին բաժնում՝ «Ում նվիրեմ իմ սիրտը», ներկայացված է ընթերցանության 12 նյութ (13 հատված): Կենտրոնում մարդն է, նրա սիրո և գործի դրսևորումները: Նյութերի մեջ ներկա է երեխան, որի դիտանկյունից էլ ներկայացվում է աշխարհը. իր ետից նա հասնում է հայրենիքի վսեմ կերպարին. ծնողներ, տատիկ-պապիկ, ընկերներ, հայրենի բնաշխարհ,- այս ամենը հենց հայրենի երկիրն է: Բաժինը եզրափակվում է Հայաստանին նվիրված բանաստեղծությամբ, որով կապ է ստեղծվում հաջորդ բաժնի հետ: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 16,5 x 24 Թուղթը՝ օֆսեթ 70գ Էջաքանակը՝ 96 Կազմը՝ ֆուտբորտ 270 գ. լամինացված					
6.	22111110-37	Դասագիրք «Մայրենի 4» 2-րդ մաս	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ հրատարակչություն, ՀՀ	«Մայրենի 4», 2-րդ մաս՝ 4-րդ դասարանի դասագիրք, հեղ. Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան Բովանդակային չափանիշներ Դասագրքում զետեղված են բազմաբնույթ տեքստեր՝ հայ և օտարազգի դասական ու ժամանակակից հեղինակների չափածո և արձակ ստեղծագործություններ (կամ հատվածներ), բանահյուսության նմուշներ և գիտահանրամատչելի փոքրածավալ նյութեր: Սա հնարավորություն է տալիս ուսուցման ընթացքում աղերսներ ստեղծելու գրական նյութի և կյանքի միջև, ընդլայնելու սովորողների աշխարհաճանաչողությունը, նրանց ծանոթացնելու լեզվի տարբեր ոճերի:Դասագրքում զետեղված նյութերը տարաբնույթ աշխատանքի հնարավորություն են ընձեռում: Մի կողմից դրանք նպաստում են այնպիսի հմտությունների ձևավորմանը, ինչպիսիք են վերլուծելը, փաստերը համադրելը, կշռադատելը, սեփական մտքերն ու կարծիքը հայտնելը,	հատ	8749	870	7611630	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				մյուս կողմից՝ լեզվական իրողությունների շուրջ կառուցված վարժություններն ու առաջադրանքները միտված են ոչ թե սոսկ գիտելիքի ձեռքբերմանը, այլ առավելաբար ստացած գիտելիքը կիրառելու հմտությունների ձևավորմանը: Ուսումնական նյութը դասագրքերում ներկայացված է տրամաբանական որոշակի հերթականությամբ: Դասագրքում կարևոր տեղ է վերապահված «Իմ տեղեկատուն» բաժնին, որը բաղկացած է երկու մասից: Առաջին մասում ներկայացված են ծրագրային լեզվական գիտելիքներ (սեղմ բացատրություններ՝ համապատասխան օրինակներով): Երկրորդ մասում հակիրճ բացատրվում են գրական այն ժանրերը, որոնց ծանոթանում է տարրական դպրոցի աշակերտը: Վերջում զետեղված է ուղղագրական բառարան, որն ամփոփում է ուղղագրական դժվարություն ունեցող այն բառերը, որոնք հանդիպում են ընթերցանության բնագրերում: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 16,5 x 24 Թուղթը՝ օֆսեթ 70գ Էջաքանակը՝ 112 Կազմը՝ ֆուտբորտ 270 գ. Լամինացված					
7.	22111110-26	Դասագիրք «Ռուսաց լեզու 3» 1-ին մաս	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ հրատարակչություն, ՀՀ	«Ռուսաց լեզու 3», 1-ին մաս՝ /3-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Բ.Եսաջանյան, Վ.Խանզրատյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը պետք է ապահովի նյութի ընկալումը և դրա քայլ առ քայլ (փուլ առ փուլ) ավելացումը: Առաջին կիսամյակի բոլոր դասերը պետքէ կրեն համապարփակ բնույթ՝ լեզվի և խոսքի փոխկապակցված ուսուցում: Թեմաները պետք է ներկայացված լինեն են լեզվաբության բաժիններում՝ հնչյունաբանություն, բառապաշար, բառի ձևավորում, ձևաբանություն, շարահյուսություն: Առաջին կիսամյակի լեզվական նյութը պետք է ապահովի է հետևյալ բաժինների ուսումնասիրությունը՝այբուբենի, նախադասության, հնչյունների և տառերի, բառի (ուղղագրության ճիշտ գրություն, շեշտ և այլն, նախդիրներ, ով, ինչ հարցերին պատասխանող բառեր), կրկնողությունը: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 20 x 26 Թուղթը՝ օֆսեթ 70գ.	հատ	8554	780	6672120	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

				Էջաքանակը՝ 80 Կազմը՝ ֆուտբորտ 270 գ. լամինացված					
8.	22111110-28	Դասագիրք «Ռուսաց լեզու 3» 2-րդ մաս	«Էդիթ Պրինտ» ՍՊԸ հրատարակչություն, ՀՀ	« Ռուսաց լեզու 3», 2-րդ մաս՝ 3-րդ դասարանի դասագիրք, հեղ.՝ Բ.Եսաջանյան, Վ.Խանզրատյան Բովանդակային չափանիշներ Դասագրքի 2-րդ մասը նույնպես պետք է ապահովի նյութի ընկալումը և դրա քայլ առ քայլ (փուլ առ փուլ) ավելացումը: Երկրորդ կիսամյակի դասերը պետք է ապահովեն լեզվաբանական, խոսակցական, մշակութաբանական կարողություններ հետևյալ բաժիններով՝ ձևաբանություն և շարահյուսություն (ինչ անել հարցին պատասխանող բառեր, ինչպիսի հարցին պատասխանող բառեր և այլն, թվականներ, դերանուններ, տեքստը՝ որպես լեզվական միավոր, ընտրված է տվյալ թեմաներին համապատասխան: Դասագիրքը պետք է համապատասխան լինի ռուսաց լեզվի ծրագրին և ապահովի լեզվի լիակատար ուսուցումը: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 20 x 26 Թուղթը՝ օֆսեթ 70 Էջաքանակը՝ 88 Կազմը՝ ֆուտբորտ 270 գ. լամինացված	հատ	8554	850	7270900	Մինչև ս/թ օգոստոսի 20-ը

1-8- րդ չափաբաժինների համար

Ելքային տեղեկություններ՝ Հայպետստանդարտի կոլեգիայի 1996թ. հոկտեմբերի 25-ի թիվ 8 որոշմամբ հաստատված «Հրատարակություն, ելքային տեղեկություններ» ԳՈՍՏ 7.4-95 միջպետական ստանդարտին համապատասխան:

Հատուկ նշագրում՝ դասագրքերի տեսանելի մասում, առանձին գունաբաժանմամբ՝ <<Վաճառքի ենթակա չէ>> բառերը:

Դասագրքերի մատակարարումն իրականացվում է Կատարողի կողմից՝ համաձայն կից **բաշխման ցուցակի**:

Դասագրքերը պետք է լինեն նոր՝ չօգտագործված:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

---------- Ա. Գալստյան

ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ

Հաշիվ-ծրագրի համարը	Անվանումը	Երևանի քաղաքապետարանի հանարկարթության վարչություն	Տավուշի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Լոռու մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Շիրակի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	Արագածոտնի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչութ	Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչութ	Գեղարքունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչութ	Արմավիրի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչու	Արարատի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչութ	Վայոց_Ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչ.	Սյունիքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչություն	ԿԳՆ ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստ.	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Դասագիրք «Այբբենարան» /հեղ.Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան/	4300	312	750	390	510	1770	489	1628	1120	300	348	387	12304
2	Դասագիրք «Մայրենի 1» /հեղ.Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան/	1453	334	100	340	300	361	444	638	658	200	214	105	5147
3	Դասագիրք «Մայրենի 2», 1-ին մաս/հեղ.Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան/	2356	224	814	360	324	768	254	823	711	150	300	85	7169
4	Դասագիրք «Մայրենի 2», 2 մաս /հեղ.Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան/	2356	224	814	360	324	768	254	823	711	150	300	85	7169
5	Դասագիրք «Մայրենի 4»,1-ն մաս /հեղ. Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան /	3285	215	789	520	301	841	657	502	751	245	333	310	8749
6	Դասագիրք «Մայրենի 4», 2-րդ մաս /հեղ. Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան /	3285	215	789	520	301	841	657	502	751	245	333	310	8749

7	« Ռուսաց լեզու 3», 1-ին մաս/հեղ.՝ Բ.Եսաջանյան, Վ.Խանզրատյան/	1885	311	1007	1170	556	1240	617	0	853	80	634	201	8554
8	« Ռուսաց լեզու 3», 2-րդ մաս /հեղ.՝ Բ.Եսաջանյան, Վ.Խանզրատյան/	1885	311	1007	1170	556	1240	617	0	853	80	634	201	8554
ԸՆԴԱՄԵՆԸ		**20805**	**2146**	**6070**	**4830**	**3172**	**7829**	**3989**	**4916**	**6408**	**1450**	**3096**	**1684**	**66395**

* ՀՀ ԿԳՆ ենթակա ուսումնական հաստատությունների դասագրքերը հանձնվում են Երևանի թիվ 112 ավագ դպրոց:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

---------- Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

---------- Ա. Գալստյան

Հավելված N 2
«30» 05 2019թ. կնքված
ՀՀԿԳՆՄԱՊՁԲ-19/22 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ապրանքի															
չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	22111110-2	Դասագիրք «Այբբենարան» /հեղ.Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան						10704000	18456000	18456000	18456000	18456000	18456000	18456000	18456000
2	22111110-4	Դասագիրք «Մայրենի 1» /հեղ.Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան/						4269000	7360210	7360210	7360210	7360210	7360210	7360210	7360210
3	22111110-12	Դասագիրք «Մայրենի 2», 1-ին մաս /հեղ.Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան/						3534000	6093650	6093650	6093650	6093650	6093650	6093650	6093650

4	22111110-14	Դասագիրք «Մայրենի 2», 2-րդ մաս /հեղ.Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան/						3534000	6093650	6093650	6093650	6093650	6093650	6093650	6093650
5	22111110-35	Դասագիրք «Մայրենի 4», 1-ին մաս /հեղ. Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան /						3958000	6824220	6824220	6824220	6824220	6824220	6824220	6824220
6	22111110-37	Դասագիրք «Մայրենի 4», 2-րդ մաս /հեղ. Դ.Գյուրջինյան, Ն.Հեքեքյան /						4414000	7611630	7611630	7611630	7611630	7611630	7611630	7611630
7	22111110-26	« Ռուսաց լեզու 3»,1մաս /հեղ.՝ Բ.Եսաջանյան, Վ.Խանզրատյան/						3870000	6672120	6672120	6672120	6672120	6672120	6672120	6672120
8	22111110-28	« Ռուսաց լեզու 3», 2-րդ մաս /հեղ.՝ Բ.Եսաջանյան, Վ.Խանզրատյան/						4217000	7270900	7270900	7270900	7270900	7270900	7270900	7270900
ԸՆԴԱՄԵՆԸ								**38500000**	**66382380**	**66382380**	**66382380**	**66382380**	**66382380**	**66382380**	**66382380**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Ն. Հարությունյան

ԿԱՏԱՐՈՂ

Ա. Գալստյան